Հավելված
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի
27.10.2021թ. թիվ 494-Ա հրամանի

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ՍԵՆՅԱԿՆԵՐԸ (ՏԵՂԵՐԸ) ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հանրակացարանի սենյակները (տեղերը) տրամադրվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի անվճար ուսուցման, հեռակա ուսուցման ֆակուլտետի, կրթահամալիրի քոլեջի, կրթահամալիրի ուսումնական կենտրոնի սովորողներին և կրթահամալիրում վերապատրաստման դասընթացներ անցնող ոստիկանության ծառայողներին (այսուհետ՝ սովորողներ) հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) սովորողը ուսումնառությունը սկսելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում զեկուցագիր է ներկայացրել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի տեղակալ, ինքը և տնտեսական բաժնի պետին՝ հանրակացարանի սենյակ (տեղ) տրամադրելու համար՝ զեկուցագրին կցելով համապատասխան փաստաթղթերը :

2) սովորողի մշտական բնակության հաշվառման վայրի վարչատարածքային միավորի (համայնքի, բնակավայրի) և Երևան քաղաքի միջև հեռավորությունը կազմում է 30 կամ ավելի կիլոմետր: Սույն կետի կիրառման նպատակով հիմք է ընդունվում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքում հրապարակված՝ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների (համայնքների, բնակավայրերի) և Երևան քաղաքի միջև հեռավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

3) ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հանրակացարանում առկա են ազատ սենյակներ (տեղեր)՝ ըստ սովորողների սեռի:

2. Եթե հանրակացարանի սենյակ տրամադրելու համար զեկուցագիր ներկայացրած սովորողների թիվն ավելի մեծ է, քան հանրակացարանում առկա ազատ տեղերի թիվը, ապա նախապատվությունը ըստ ներքոհիշյալ հաջորդականության տրվում է՝

1) այն սովորողին, ով ՀՀ ոստիկանության կրթահամալիրում ուսումնառությանը նախորդող ամսում հանդիսացել է սոցիալապես անապահով ընտանիքի անդամ, որի անապահովության միավորը ավելի բարձր է: Սույն չափանիշի առկայությունը հավաստվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության տարածքային մարմնի կողմից տրված տեղեկանքով:

2) 23 տարին չլրացած երկկողմանի ծնողազուրկ սովորողին: Սույն չափանիշի առկայությունը հավաստվում է սովորողի ծննդյան վկայականի և ծնողների մահվան վկայականների պատճեններով:

3) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ սովորողին: Սույն չափանիշի առկայությունը հավաստվում է սովորողի ծննդյան վկայականի և ծնողի մահվան վկայականի պատճեններով:

4) անչափահաս երեխա (երեխաներ) ունեցող սովորողին՝ ըստ երեխաների թվի: Սույն չափանիշի առկայությունը հավաստվում է սովորողի երեխայի (երեխաների) ծննդյան վկայականի (վկայականների) կամ երեխայի հայրության ճանաչման վկայականի (վկայականների) պատճեններով:

5) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ հանդիսացող ծնող կամ երեխա ունեցող սովորողին: Սույն չափանիշի առկայությունը հավաստվում է սովորողի, նրա ծնողի անձը հաստատող փաստաթղթի, երեխայի ծննդյան վկայականի, սովորողի ծնողի կամ երեխայի հաշմանդամության կարգը հավաստող փաստաթղթի պատճեններով:

6) այն սովորողին, ում մշտական բնակության հաշվառման վայրի վարչատարածքային միավորը (համայնքը, բնակավայրը) Երևան քաղաքից ավելի հեռու է: Սույն չափանիշի առկայությունը հավաստվում է սովորողի մշտական բնակության հաշվառման վայրի մասին տեղեկանքով:

3. Հանրակացարանի սենյակները սովորողների միջև բաշխելուց հետո ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի տեղակալ, ինքը և տնտեսական բաժնի պետը կազմում է հանրակացարանում բնակվող սովորողների ցուցակը, որը հաստատվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի կողմից: